

**«ՔԱՆՔԱՐՆԵՐԻ» ԵՎ «ՄՆԱՄԵՐԻ» ԱՌԱԿՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱԼ ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱԼ ՄԵՋ**

Հայ եկեղեցու հայրերը Հայոց Ճաշոց ծիսամատյաններում Պահքի շրջանում ընթերցվելու նպատակով հաճախ 11 առակ են առանձնացնում, որոնք բացառությամբ թերևս «Փարիսեցու և մաքսավորի» և «Հարսանյաց սեղանի», «Անիրավ դատավորի» առակների, ուր խոսքը խոնարհության մասին է, այս կամ այն չափով շնորհների և ինչքի ձշմարիտ տնօրինմանն են առնչվում սկսյալ «Քանքարների» և «Մնասների», «Անմիտ մեծատան», «Չար մշակների» առակներից մինչև «Անպտուղ թզենու», «Անառակ որդու», «Անիրավ տնտեսի»: Որոշակիորեն նման աղետներ են ունեն անգամ «Տասը կույսերի» և «Աղքատ Ղազարոսի» պատումները:

Մարդկային չքավորությունը միանգամայն այլ կերպ էր ընկալվում վաղ և միջին դարերում: Եկեղեցու հայրերը համարում էին, որ աղքատությունը զերծ է պահում շատերին աղետալի փորձություններից: Տաթևի դպրոցի ներկայացուցիչ Մատթեոս վարդապետ Ջուղայեցու քարոզներում թվարկվում են անգամ աղքատության առավելությունները. «...զի փոքր ունի աղքատն տկարություն մարմնոյն վասն փոքր կերակրոյն, իսկ մեծատունն՝ առաւել է ախտք և ցաք ի մարմինն կրիս և այլք, և այն վասն բազում և [ան]յագ զամենայն ինչ ուտելոյն: Չորրորդ՝ զի աղքատն ոչ հոգայ վասն գողոց, այլ անգիստ ննջէ, իսկ վասն մեծատունն ո՛չ կարէ ձշմարտապէս ննջել, վասն երկիւղի գողոցն, թէ յայսմ ժամու կտրեն զտունն»<sup>1</sup>:

Ավետարանական քարոզխոսության մեջ, հղում անելով Աստվածաշնչի մի շարք հատվածների, երկրային ունեցվածքը, նրա առատությունը և մարդու նյութական կարողությունն ընդհանրապես համար-

1 ՄՄ. ձեռ. 2519, ինքնագիր, թ. 5ա-82բ, Նուաստ և յետին աշակերտի Մատթեոս, Եռամեծացն Յովհաննու և Գրիգորի աշխատասիրեաց, Հաւաքումն բանից յԱւետարանէն Ղուկասու և քարոզ ի վայելումն մանկանց Հայաստանեաց, թ. 26ա (այսուհետ՝ Մատթեոս Ջուղայեցի):

վում են Աստուծոց ստացված ժամանակավոր բարիքներ. «Մեծութիւն և փառք՝ իմ իսկ են, և ստացուածք բազմաց և արդարութիւն» (Առակ. Ը 18), և մարդուն միայն վարձակալությամբ է տրված այդ տնօրինությունը: Մի շարք մեկնություններում այս երկու առակների՝ «Անմիտ մեծատան» և «Անիրավ տնտեսի» խրատական բանաձևումները խաչասերվում են: Նույն Ջուղայեցին «Անմիտ մեծատան» առակի՝ «Որոյ ետուն անդք տոհմականք» (Ղուկ. ԺԲ 16) տնահամարը մեկնելիս հիշում է «Անիրավ տնտեսի» առակի գլխավոր պատգամը, և այլք նույնպես, երկրային ունեցվածքի շուրջ խոսելիս, հիշատակում են այս համարը. «Եւ դարձեալ՝ տայ Աստուած զինչս մարմնականս, զի նովաւ զնեսցեն զարքայութիւնն՝ ըստ այնմ. «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակասեսցի այս, ընդունիցին զձեզ յարկսն յաւիտենից» (Ղուկ. ԺՁ. 9)»:

Ինչպես Քրիստոս որևէ երևույթի մասին խոսելիս մի քանի առակ է երբեմն պատմում, այնպես էլ Ավետարանի մեկնիչները որոշ առակների զուգահեռումներով առավել համակողմանի են տեսնում արծարծվող խնդիրը: Այս երևույթը հատուկ է և չափածո ժանրերին, օրինակ չորրորդ կամ Տնտեսի Կիրակիի կանոնում երգվող գանձում. «Անմիտ մեծատան» «Անիրավ տնտեսի» առակներին շողկապվում է և «Աղքատ Ղազարոսի» առակը: Նման զուգահեռ մեկնման արդյունքում տնտեսությունը կապվում է մարդու դրախտից արտաքսման իրողության հետ.

«Այլեւ արար ըզմարդն անձնիշխան եւ ետուր նըմա հոգի բանական,

Արար նըմա պատիւ մեծութեան, ի տիպ Իւրոյն բարերարութեան, եղ ի յաղին դրախտին փափկութեան, գործել ըզնայ ըստ պահպանութեան,

Իսկ նա վատնեաց զինչս արքունական ու եթող զհամարըն տընտեսական,

Բայց գըթացեալ Տէրն արարչական եւ եթող զպարտիսըն գրաւորական»<sup>3</sup>, որին էլ հաջորդում է աղքատ Ղազարոսի դրվագը.

2 Մատթեոս Ջուղայեցի, թ. 26ա:

3 Մատենագիրք Հայոց, հտ. ԺԳ., Գանձարան, գիրք Ա., աշխ. Վ. Դևրիկյանի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 461 (այսուհետ՝ Գանձարան և համապատասխան էջը):

«Առ մեծատան դըրան կայր անկեալ, եւ փշրանաց հացին կարաւտեալ,

ի խիստ ցաւոցն իւր վիրաւորեալ, մոխրաթաւալ ի յերկիր անկեալ, Այն մեծատունն անգութ չարացեալ, բայց Ղազարոս յԱստուծոյ խնամեալ,

Քունըն մահու ըզնա ազատեալ, երանաւէտ կենաց ժամանեալ,

Հրեշտակս յերկնից նըմայ առաքեալ, զմաքուր հոգի նորա աւանդեալ»<sup>4</sup>:

Այսպիսով «Անիրավ Տնտեսի» Կիրակիում, երբ տարաբոնոյթ կերպով հիշվում է «Անմիտ մեծատան» կամ «Աղքատ Ղազարոսի» առակները, մեկնիչների կողմից ուղղակի ակնարկ է կատարվում՝ որն է ունեցվածքի ճշմարիտ տնօրինումը:

Մեջբերումներում նկատեցինք և ինչպես դեռ ստորև խոսքը այստեղ միայն նյութական արժեքներին չի վերաբերվում, այլ նաև «աննյութ բանի», Տիրոջ կողմից ստացված յուրաքանչյուր շնորհին է առնչվում: Քրիստոս սա հատկապես շեշտում է «Քանքարների» և «Մնասների» առակների խրատում: Առաջինին մենք հանդիպում ենք Մատթեոսի<sup>5</sup> իսկ «Մնասների առակը»՝ Ղուկասի<sup>6</sup> Ավետարաններում: Այս երկու առակների ուղերձներն այնքան սերտ են, որ իբրև կանոն, քարոզխոսական գրականության մեջ մեկնվում են կապակցաբար: Սույն առակները նաև անվանում են երեք ծառաների առակներ<sup>7</sup>:

Երկու առակներում էլ տերը հեռանում է տարաշխարհի. «Քանքարների» պարագայում իր ունեցվածքը բաժանում է ծառաներին, իսկ «Մնասների» առակում ինքն է գնում՝ իր հարստությունը (թագավորությունը) ստանալու:

Մնասների առակում իր թագավորությունն ստանալու համար տարաշխարհ գնացող ազնվականը ենթադրաբար Հրեաստանի թագավորն էր, ով ստիպված էր լինում գահ բարձրանալու համար հասնել Հռոմ: Սակայն ծանոթ միջավայրի վերարտադրությունը ժամանակի ընթացքում իր տեղը զիջել է անբողջապես խորհրդաբանական իմաստին, իսկ առակը դրանից միայն շահել է:

Եթե մենք հասկանանք, թե ինչու են քանքարները բաժանվում ծա-

4 Գանձարան՝ էջ 461:

5 Մատթ. ԻԵ. 14-30:

6 Ղուկ. ԺԹ. 12-26:

7 **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 693:

ռաների միջև, կհասկանանք նաև, թե ինչու է այն ընդգրկված Պահոց շրջանի եկեղեցական ընթերցա-նության մեջ: Խոսքը Տիրոջ Երկրորդ Գալստյան մասին է, երբ մարդիկ պետք է վերադարձնեն իրենց տրվածը շնորհները: Մենք բոլորս ընդունեցինք Տիրոջ «քանքարները», այսինքն՝ աստվածաշնչյան պատվիրանները, յուրաքանչյուրը ըստ իր կարողության չափի: Այս մասին է խոսում նաև Պետրոս Բերդումյանը<sup>8</sup>: Եվ վերջապես, ինչո՞ւ քանքար-ները բաժանվեցին հենց երեք մասի<sup>9</sup>: Դրանք բաժանվում են ըստ յուրաքանչյուրի կարողության՝ մեկին հինգ, մեկին՝ երկուս, մյուսին էլ՝ մեկ, քանի որ մարդկային մտքի աստիճանները երեքն են՝ սուր, միջակ և բութ<sup>10</sup>: Ընդ որում, Տերը յուրաքանչյուրին տալիս է այնքան շնորհ, որ վերջինիս համար այդ չափը վնասակար չլինի: Այս մոտեցումը հատկապես տեսանելի է Մխիթար Աբբահոր պարզաբանման մեջ. «...ըստ որում այս քանակություն այսմիկ ծառայի էր օգտակար և այն քանակություն այնմիկ ծառայի և ոչ էր այնպես, իբրու թէ որում ետ զհինգ քանքարն, ոչ կարէր տալ զտասն քանքար և որում զերկուսն ետ, ոչ կարէր տալ զհինգ և որում զմին ետ, ոչ կարէր տալ զերկուս»<sup>11</sup>:

Հովհաննես Ծործորեցին գտնում է, որ այս շնորհները կարող են լինել թե՛ զուտ հոգևոր, որն է սարկավագությունը և եկեղեցական գործունեությունը, թե՛ մարմնավոր՝ արհեստագործությունը և նմանօրինակ վարպետությունները. ««Եւ ումեմն մի, իւրաքանչիւր լըստ իւրում կարիի»». այսինքն մի շնորհ՝ հոգևոր կամ մարմնաւոր, հոգևոր՝ որպէս սարկաւագութիւն, և մարմնաւոր որպէս հիւսնութիւն կամ դարբնութիւն, քանզի զայս վասն այնորիկ եդ, զի ցուցանէ, թէ որ յոյժ պակասն է՝ ի միոջ նուազ է, որպէս ասէ, թէ իւրաքանչիւր ըստ իւրում կարի յԱստուծոյ ընկալան և ի վերուստ ունին զնպաստաւորութիւն շնորհացն, որով պանծան»<sup>12</sup>:

8 Տե՛ս **Բերթումեան-Աղամալեանց Պետրոս եպս.**, Աղբյուր բացեալ, միաբան Սրբոյ Էջմիածնի, ի Ս. Կաթողիկէն Էջմիածին, 1845, էջ 148-9, (այսուհետ՝ **Պետրոս եպս. Բերթումեան-Աղամալեանց**):

9 Տե՛ս Մատթ. ԻԵ 15:

10 Տե՛ս **Պետրոս եպս. Բերթումեան-Աղամալեանց**, էջ 148-9:

11 **Մխիթար Սեբաստացի**, Մեկնություն սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթէոսի, Վենետիկ, 1737, էջ 664, (այսուհետ՝ **Մխիթար Սեբաստացի**):

12 **Յովհաննէս Ծործորեցի**, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, Ս. Էջմիածին, 2010, էջ 555, (այսուհետ՝ **Յոհաննէս Ծործորեցի**):

Իգնատիոս Սևեռնեցին, օրինակ, «քանքարների» բաշխումը համարում է շնորհներ-ը, որ տրված են ընտրյալներին, իսկ «մնասները»՝ օրենքն ու հնազանդությունն են, որ տրված է բոլորին, այսինքն՝ աս Աստծո բարեգթությունն է, որ տարածվում է բոլորի վրա առանց բացառության: Ըստ նրա՝ առակն ուսուցանում է մեզ, որ երկուսի համար էլ պետք է շնորհակալ լինենք և վերադարձնենք առավելապես. «Արդ, ի համեմատելն զայս ընդ մերս՝ բարուք դատեցաք՝ յատուկ առ վարդապետս որոշել զքանքարսն, իսկ զմնասն զայս հասարակաբար առ ամենեսեանն տուեալ արինացն նորա հնազանդութիւն՝ գործել զնա և պահել, որում ամենայն ոք ինքնատէր և բաւական է»<sup>13</sup>:

Մխիթար Սեբաստացին, Աստծուց մեզ շնորհված քանքարների շուրջ խոսելիս, թվում է նաև այնպիսի հատկություններ որպիսիք են. «Նրբութիւնք դատողութեանց, սրամտութիւն, հանձարեղութիւն, առողջութիւն, խոհեմութիւն, գիտութիւն, ճոռոմաբանութիւն, հնարագիտութիւն և այլք սոցին նմանք, որոց ունօղքն եթէ ի փառս Աստուծոյ ի գործածեալ զայնս, միջոց ստանալոյ զկեանս առաքինականս առնիցեն»<sup>14</sup>: Նմանատիպ թվարկումները ուշագրավ են նաև նրանով, որ պատկերացում են տալիս, թե մարդու որ շնորհներն էին հատկապես կարևորվում այս կամ այն ժամանակաշրջանում:

Եվ այսպես, փորձենք բացահայտել առակի կառուցվածքը:

Նախ՝ ո՞վ է տերը և ովքե՞ր են ծառաները: Մնասների առակն սկսվում է հենց այսպես. «Կոչեաց զծառայս իւր» (Մատթ. ԻԵ 14): Ակնհայտ է, որ խորհրդաբանորեն տերը Քրիստոսն է, այս պարագայում ովքե՞ր են ծառաները: Սա բացահայտելու համար հարկ է ընկալել, թե ով է ծառան, և ո՞րն է ծառայությունը. «Չորս կերպ է ծառայութեան՝ Նախ՝ որ կամաւ լինի, երկրորդ՝ գնեալ, երրորդ՝ գերեալ, չորրորդ՝ ընդօժին»<sup>15</sup>: Եվ մենք այս չորս կերպով ծառայում ենք. «Նախ կամաւ՝ ըստ հաւատոյն, երկրորդ՝ զի արեամբ գնեաց, երրորդ՝ ի գերողէն դարձոյց, չորրորդ՝ ընդօժին արարչութեամբն»<sup>16</sup>:

13 **Իգնատիոս Սևեռնեցի**, Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ ս. վարդապետին Իգնատիոսի, ի խնդրոյ Տեառն Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի... յամի Փրկչին 1824, ի Հասան փաշայ խանն, Կոստանդնուպօլիս, էջ 371, (այսուհետ՝ Իգնատիոս Սևեռնեցի):

14 **Մխիթար Սեբաստացի**, էջ 663:

15 **Գրիգոր Տաթևացի**, Մեկնողական գրականության քրիստոմատիա, Ավետարանական առակների մեկնություն, Ս. Էջմիածին, 2013, էջ 264, (այսուհետ՝ Գրիգոր Տաթևացի, Քրիստոմատիա, Առակների մեկնություն):

16 Նույն տեղում, էջ 264:

Մեր ուշադրությունը գրավող հաջորդ հանգամանքը մի շարք առակների, այդ թվում և հետևյալ երկուսի՝ տնից, թագավորությունից հեռանալու, տարաշխարհ գնալու մոտիվն է: «Գնաց յաշխարհի հեռի», կամ «ի տար աշխարհ», որով կարծես կարմիր թելի նման նմանատիպ խորհուրդ է հրամցվում: Այս դրվագը կենտրոնական է նաև «Անառակ որդու» առակում: Առակից առակ փոխանցվող խորհրդաբանական այդ այբուբենը, մեկ անգամ որևէ առակում որսալով, թույլ է տալիս նույնատիպ հատվածները բացահայտել և մյուս դեպքերում:

Եվ այսպես, ո՞րն է «հեռու» կամ «այլ աշխարհ» գնալու այլաբանությունը:

Ինչպես արդեն մենք վարժվել ենք նորկտակարանյան մի շարք դրվագների մեկ-նություններից, բավական ընթարձակ բացատրություններ կարող են տրվել և հերեոսների պարզ գործողություններին: Իգնատիոս Սևեռնեցին<sup>17</sup>, օրինակ, այս «տարաշխարհ գնալը» այսպես է վերծանում. «Այսինքն՝ ի ներքին կողմն վարագորին, այսինքն՝ յերկինս լուսեղէնս յանմատոյց բնակարանս, զոր Պաւղոս ասէ (տե՛ս Եբր. 2. 19): Իսկ «գնալ» զհամբառնալն ասէ, զի կամաւ ել և նստավ ընդ աջմէ Հար: Իսկ այն բնակութիւնն, զոր «հեռի» կոչէ, ոչ այնպէս հեռի է, իբր թէ ոտամբ չափի կամ ատուրքք և տարով չափի նորա հեռաւորութիւնն»<sup>18</sup>:

Տարաշխարհը Աստուծո համբերության և իմաստության հետ առնչակցելը նույնպես ընդունված հայեցում է, մեզանում նմանատիպ վերլուծություն է առաջարկում Բարսեղ Ծնորհալին (Մաշկկորցի). «Ապա ուրեմն «գնալն ի հեռաւոր աշխարհ» զհամբերելն և զերկայնամտելն Աստուծոյ ասէ, զի ոչ փոյթ ընդ փոյթ խնդրէ զբարիսն և կամ պատժէ զչարիսն, այլ՝ երկայնամիտ լինի առ երկուսին, որպէս և ի թզեւնին ուսաք»<sup>19</sup>:

17 «Գրիգոր Կաթողիկոսի Պաղաւտնայ և Ներսէսի Ծնորհալոյ և Սարգիս վարդապետին աշակերտներից էր Իգնատիոս, որ փառօք իւր ուսումնասիրական ընթացքը կատարելով Կարմիր վանքին մէջ, Սեաւ լեռան Ծափի անապատը կամ վանքը առանձնացաւ»: Ավելի մանրամասն տե՛ս Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեանց, հտ. Ա., Վենետիկ, 1865, էջ 520-1:

18 **Մատթէոս Ջուղայեցի**, Նուստ և յետին աշակերտի Մատթէոս, Եռամեծացն Յովհաննու և Գրիգորի աշխատասիրեաց, Հաւաքումն բանից յԱւետարանէն Ղուկասու և քարոզ ի վայելումն մանկանց Հայաստանեաց, թ. 64բ (այսուհետ՝ **Մատթէոս Ջուղայեցի**):

19 **Բարսեղ Ծնորհալի (Մաշկկորցի)**, Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, աշխ. Տէր Անդրեաս վրդ. Ակնեցոյ, հտ. Բ, Կոստանդնուպօլիս (ի Հասանփաշա խանն), 1826, էջ 171:

Այսպիսով, երբ նույն մոտիվն հանդիպում ենք մի քանի տարբեր ուղերձներ կրող առակներում, ակնհայտ երևում է, որ այս «տարաշխարհ»-ը միայն ֆիզիկական տարածք չէ, և չկա մեկնություն, որտեղ չի խոսվում այս մասին: Կարդանք, օրինակ, Հովհաննես Ծործորեցուն. «Ձմառն ասէ և գարշարանացն, որ յոյժ միջոց է ընդ կենդանիս և ընդ մեռեալս, կամ զղժոխս, որ հեղի և անծանալ է ի մերմէ բնութենէս, այլև գյառնելն ի մեռելոց և զնստիլն ընդ աջմէ Հաւր, որով և երկայնմտութեամբ ներէ իսկ: Գնալ անուանէ ի տար աշխարհ, քանզի ոտից մարդկան անկոխելի է և մտաց ևս անհասանելի, զոր Պաւղոս «ներքին կողմն վարագորին»<sup>20</sup>:

Գրիգոր Տաթևացին առակի մեկնությունը սկսում է «քանքարի» և «մնասի» տարբերությունների թվարկմամբ<sup>21</sup>: Եվ իրոք, այս երկու առակների նմանությունն ակներև է, սակայն կան և որոշակի տարբերություններ, որոնք նույնպես թվարկման կարգով բերում է նույն Տաթևացու աշակերտը՝ Մատթեոս Ջուղայեցին. «Արդ, այս առակ նման է այնմ առակին, որ ի Մատթէոս գրեալ են քանքարքն (տե՛ս Մատթ. ԻԵ 14-30): Եւ կարծելի եղև թե նույն են, սակայն Բ. (2) իրաց յայտնի է այլ գոյ: Նախ՝ զի անդ այլ չափով առաջնոյն էր ետ, և այլ՝ երկրորդին և երրորդին, իսկ աստ հաւասար չափ ամենեցուն: Երկրորդ՝ զի անդ որչափ ընկալան, կրկնապատիկ շահ բերին, իսկ աստ ի հաւասարէ, զոր ընկալան, ոմն՝ բազում և ոմն՝ սակաւ մատոյց»<sup>22</sup>:

Այսպիսով, այս զուգահրումները ի մի բերելով վերջինս եզրահանգում է. «Արդ ի համեմատութենէ ուսաք, զի քանքարսն առ վարդապետսն ասաց, իսկ մնասս զայս հասարակաբար առ ամենեսեան տուեալն արինաց նորա հնազանդութիւն՝ գործել զնա և պահել, որում ամենայն ոք կարէ տիրել»<sup>23</sup>:

Մխիթար Աբբահայրը ծառաներին տարանջատում է չարերի ու

20 **Յովհաննէս Ծործորեցի**, էջ 554:

21 «Երկրքին զարծաթ նշանակեն եւ ո՛չ զկշիռ: Եւ գիտեալ է, զի այլ է քանքարն, որ աստ ասէ, և այլ՝ «մնասն»՝ զոր Ղուկաս (Ղուկ. ԺԹ. 12): Եւ յայտ է ի չորից: Նախ ի տեղոյն. այն՝ յերիքով և այս՝ ի լեռն ձիթենեաց: Երկրորդ ի ժամանակէն. այն՝ նախքան զնստելն յաւանակի և այս՝ յետ նստելոյն: Երրորդ ի թուոյն. անդ Ժ. (10) թուէ և աստ՝ Ը. (8): Չորրորդ ի շահելոյն. մնասն արար Ժ. (10) մնաս, և արար Ե. (5) մնաս: Եւ քանքարն. Ե. (5) և Բ. (2) շահեցաւ» տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Քրիստոմատիա, Առակների մեկնություն, էջ 263:

22 **Մատթէոս Ջուղայեցի**, թ. 65աբ:

23 Նույն տեղում, թ. 65բ:

բարիների, և տրա-մաբանորեն չարերը նրանք են, որ չեն հավելում իրենց տիրոջ ստացվածը. «Տէրն գոլով առատաձեռն, մինչ առնու զքանքարն ի չար ծառայէն, ոչ դնէ ի քսակի իւրում, այլ տայ և պարգևէ նմա, որ ունի զտասն քանքարն և այսու յամօթ առնէ զչար ծառայն, որ զՏէրն իւր ագահ գոլ դատեաց և հնձող անտի, ուր ոչ սերմանեաց»<sup>24</sup>:

Արիստակեսի և նրա աշակերտ Եփրեմի<sup>25</sup> ավետարանական մեկնության մեջ վեր-լուծվում են միայն գլխավոր գաղափարները կրող սուրբգրային համարները: Այսինքն՝ այս կամ այն առակի տնահամարի ընտրությամբ մեկնիչը ցույց է տալիս, թե որոնք են այն գլխավոր տողերը, որոնք պետք է առանձնանան ընդհանուր պատումից և քննվեն յուրահատուկ:

Քանքարների առակում, ովքեր որ բազմապատկել էին իրենց տիրոջից ստացածը, կրկնվում է հետևյալ խոսքը. «Ասէ ցնա տէրն իւր. «Ազնի՛ւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեսան ըրոյ» (Մատթ. ԻԵ. 23):

Իգնատիոս Սկլեռնեցին և ուրիշներ ազնվության և վարձատրության մասին այս երկու առակների (նաև «Անիրավ տնտես»-ի առակի) զուգահեռներ են տեսնում, քանի որ սակավի մեջ հավատարիմ ծառայի վարձատրության մասին խոսվում է և «Քանքարների» առակում. «Ազնի՛ւ ծառայ և բարի, զի ի սակաւուդ հաւատարիմ եղեր, լիցիս իշխանութիւն ունել տասն քաղաքի» (Ղուկ. ԺԹ. 17), ինչպես և զուգահեռ է տարվում Անիրավ տնտեսի առակի հետևյալ միտքը. «Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւատարիմք, զձմարիտն ձեզ՝ ո՞ հաւատացէ» (Ղուկ. ԺԶ. 11)<sup>26</sup>: Եվ սա բավական տարածված զուգահեռ է մեկնողական մատենագրական նյութում:

Առակի վերլուծության մեջ առանցքային է հասկանալ նաև այն հանգամանքը, որ ծառան, ով չէր հավելել տիրոջից ստացվածը, ոչ թե խաբեբա էր կամ արհամարհել էր տիրոջը կամ նրա տվածը, ընդհա-

24 **Մխիթար Սեբաստացի**, էջ 681:

25 Ներսես Ընտրիալու աշակերտ Արիստակեսը և վերջինիս աշակերտ Եփրեմը շարունակել են իրենց ուսուցչի մեկնությունը: Պահպանվել են այդ աշխատության առավել քան 30 ձեռագրեր: Առավել մանրամասն տե՛ս Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, աշխ. **Պետրոսյան Եզնիկ եպս., Տեր-Ստեփանյան Ա.**, Ե., 2002, էջ 83:

26 Տե՛ս **Իգնատիոս Սկլեռնեցի**, էջ 373:

կառակը, այս ծառան պարզապես սարսափում էր իր տիրոջից, և սա բացահայտ երևում է նրա խոսքերում. «Տէր՝ գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր» (Մատթ. ԻԵ 24): Ծառայի երկյուղած այս խոսքերին հատկապես առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Գրիգոր Տաթևացին. «Հնձես, զոր ոչ սերմանեցեր» (Մատթ. ԻԵ 24) Պատասխան՝ Նախ այն է, որ Հայր սերմանեաց մարգարէիք, և Որդին հնձեաց առաքելովք: Եւ Հայր եղ զհին Արէնս, Եւ Որդին եբարձ: Եւ Հայր սփռեաց զհեթանոսս, և Որդին ժողովեաց»<sup>27</sup>:

Մնասնեքի առակում ծառան տիրոջն անվանում է խիստ և դառնաբարո, այդ պատճառով և տերը պատասխանում է նրան, թե իր բերանով նրան պիտի դատի<sup>28</sup>: Այսպիսով ակնհայտ է, որ հիմնական խրատից առաջ ասված պատկերավոր պատումները նախապատրաստությունն են վարդապետական բուն ասելիքի:

Առակում այս բուն ասելիքը իր կայուն դիրքավորումն ունի՝ նրա խրատական մասը, և այս երկու առակները զուգորդվում են մեկնողական գրականության մեջ պայմանավորված նաև նրանց հիմնական ուղերձով, խրատական հատվածով, որոնք գրեթե նույնական են, ինչպես և առակների լուծմամբ, որ երկու դեպքում էլ տիրոջ կողմից իր ծառաներին տրված ունեցվածքի վերաբաշխմամբ է ավարտվում<sup>29</sup>: Այսպիսով, առակը ամփոփող խրատը՝ «Ամենայնի, որ ունիցի՝ տացի, և որ ոչն ունիցի, և զոր ունիցի, բարձցի ի նմանէ» (ԺԹ. 26), Իգնատիոս Սկլեռնեցին այսպես է պարզաբանում. «Չայս եղ իմանալ մեզ՝ եթէ ոչ ըստ չափոյ վաստակոցն են պարզեքն, այլ ըստ աշխատութեանն, որում արժանի արարին զանձինս, ունին և յաւելու նոցա այլ ևս առատութիւն պարզեաց նորա: Իսկ ծուլիցն և հեղգացելոցն, վասն զի ոչ կամեցան ստանալ ինչ անձանց յանտի բարեացն, արդարութեամբ բառնայ յայնպիսեաց և զայն ևս, զոր ինքն ետ զաւագանին շնորհ, որով որդիք Աստուծոյ արժանացան լինել»<sup>30</sup>: Այս համարը գրեթե նույն

կերպ է ընկալում և Յովհաննես Ծործորեցին. «Այսինքն՝ թէ որ ըմբռնէ զառեալն, ունի և վայելէ, իսկ որ ոչ ունի զտուեալն, զերծցի ի նմանէ այն՝ ասէ, և է այս՝ կամ ըստ մարմնաւոր տրոց, կամ ըստ հոգևոր շնորհաց վարդապետութեան, կամ քահանայութեան»<sup>31</sup>:

Այսպիսով, քանքարներն ու մնասները մեզ տրված շնորհներն են: Փոքրի մեջ հավատարիմ ծառային տրվելու է վարձատրություն, իշխանություն տնօրինելու տասը քաղաքի կարողությունը<sup>32</sup>: Տիրոջ կողմից ազնիվ ու բարի ծառա կոչվում է նա, ով բազմապատկում է իրեն շնորհվածը:

Առակի միջոցով հոգևոր ձյնարտությունը փոխանցվում է ոչ թե խորհրդավորության գաղտնի շղարշով, այլ առօրյա օրնակներով: Այդ առտնինության շեշտումը ուսուցանում է, որ երբեմն հավիտենական հարցերի պատասխանը կարող է թաքնված լինել հանապազորյա կենցաղավարության մեջ:

Ինչ վերաբերում է «Տասը մնասների» առակին, Պետրոս Բերդումյանը համարում է, որ խորհրդաբանորեն «տասը մնասը» հրեաներին տրված տասնաբանյա Օրենքն է, ուր ներառված են գրեթե ամբողջ օրենքները և մարգարեների խոսքը: Սա է ավանդվում ծառաներին կատարելու և պահպանելու համար<sup>33</sup>:

Ընդհանուր առմամբ, սակայն, աննշան տարբերություններով «Տասը մնասների» առակն ամբողջապես կրկնում է «Քանքարների» պատմությունը. սրանք, կարելի է ասել, այն շարք առակներն են, երբ Փրկիչը նույն ասելիքը սեպում է ևս մի պատկերավորման ձևով, ինչպես դա մենք նկատում ենք ասենք «Կորած ոչխարի», «Կորած դրամի», «Անառակ որդու» առակների դեպքում:

Ընդհանուր մի հատկանշական զուգահեռ ևս միավորում է այս երկու առակները: Հարկ է խոստովանել, որ սրանց հանգուցալուծումը նորկտակարանյան առակներին ոչ բնորոշ խիստ է: Առաջինի դեպքում՝ «Եւ զծառայոյ անպիտան հանէք ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրձել ատամանց» (Մատթ. ԻԵ 30), երկրորդում՝ «Չթշնամիսն իմ՝ զայնոսիկ, որք ոչ կամէին զթագաւորելն իմ, ածէք և սպանէք առաջի իմ» (Ղուկ. ԺԹ. 27): Հարկ է խոստովանել, որ նմանատիպ խս-

27 Գրիգոր Տաթևացի, Քրիստոմատիա, Առակների մեկնություն, էջ 266:

28 «Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եղի, Եւ հնձեմ՝ զոր ոչ սերմանեցի» (Ղուկ. ԺԹ 22):

29 Քանքարների առակում տերը կարգադրում է. «Արդ, առէք ի դմանէ զքանքարդ և տուք այնմ, որ ունիցի զտասն քանքարն» (Մատթ. ԻԵ. 28):

30 Իգնատիոս Սկլեռնեցի, էջ 375-6:

31 Յովհաննէս Ծործորեցի, էջ 562:

32 Տէն Ղուկ. ԺԹ 17:

33 Այս մասին տէն Պետրոս եպս. Բերթումեան-Աղամալեանց, էջ 148-50:

տությունը հատուկ է Հին Կտակարանի որոշ Գրքերի, Ավետարանում նման տողերը հազվադեպ են: Եվ գուցե պատահական չէ, որ դրանցից երկուսին մենք հանդիպում ենք Երկնային արքայության հատուցման մասին առակներում:

Այս երկու առակներն էլ խորհրդանշում են Քրիստոսի Երկրորդ Գալուստը: Սա է հիմնական պատճառը, որ Հայ Եկեղեցու հայրերը սրանք ներառել են Մեծի Պահոց շրջանում ընթերցվող ծիսամատյանում:

#### Резюме

#### Параллельные толкования новозаветные притчи "О талантах" и "О минах" в средневековой армянской богословской литературе

Армянские авторы в своих толкованиях преимущественно сводят в единый сюжет притчи о "Десяти минах" и о "Талантах". В статье рассматриваются варианты трактовки этих двух сюжетов в интерпретации Григора Татеваци, Матеоса Джугаеци, Ованнеса Цорцореци, Игнатiosa Севлернеци, Барсега Шнорали, Мхитара Себастиана и др. В их толкованиях ставятся вопросы о том "что есть служба", "что символизируют мины или таланты", "почему хозяин поручает следить за своим имуществом именно троим", "что символизирует дальняя (чужая) страна, куда направляется хозяин" и т.д.

Сюжеты притчи "О талантах" и "О десяти минах" вторят друг другу. То же самое можно сказать и о ряде других притч, например, "О заблудшей овце", "О потерянной драхме", и "О блудном сыне", когда Христос, как бы закрепляя сказанное, рассказывает еще одну историю.

#### Parallel Interpretation on the New Testament Parables about the Talents and "Mines" in Medieval Armenian Theological Literature

The Armenian authors mainly merge the plots of parables about "The Ten Talents" and "The Golden Coins". Current article discusses how the interpretations on these two stories appear in the Commentaries of medieval Armenian theologians such as Grigor Tatevatz, Mateos Dzhugaetzi, Hovhannes Tortoretzi, Ignatios Sevlernetzi, Barsegh Shnorhali, Mkhitar Sebastatzi, et al. The focus of these Commentaries is on the questions "what is the service", "what the golden coins or talents symbolize", "why the owner charges the property to three" and "what the distant (foreign) country he leaves for symbolizes", etc.

Thus, the plots of the parables about "The Ten Talents" and "The Ten mines" echo each other. The same thing might be said about some other parables, like the parables on "The lost sheep", "The lost drachma", and "The prodigal son", when Christ as if sealing the already narrated stories tells one more.

There is an allegorical allusion to the Second Coming of Christ in the parables about "The Buried Talent" and "Mines" that prompted the Fathers of the Armenian Church to include them in the list of eleven parables as the Lectionary readings during the Great Lent.